

Արձանագրություն N3

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

16.10.2017թ. նիստի

Օրակարգ

1. Շնորհակալագրերի հանձնում ֆակուլտետի կենսաթոշակի անցած դասախոսներին:
2. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անվանափոխության հարցի քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 24-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկան Ս. Աբրահամյանը գիտխորհրդի նիստը սկսեց կենսաթոշակի անցած դասախոսներին շնորհակալություն հայտնելով ֆակուլտետի կայացման գործում իրենց մեծ ավանդը ներդնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գիտխորհրդի անդամներ Մ. Ապրեսյանը, Ս. Գասպարյանը, Կ. Կարապետյանը, Շ. Պարոնյանը և այլք նշեցին, որ կենսաթոշակի անցած բոլոր դասախոսները մշտապես աշխատել են մեծ նվիրումով՝ մշտապես ցուցաբերելով բարձր պրոֆեսիոնալիզմ և օրինակելի վարքագիծ: Այնուհետև ղեկանը բազմամյա փորձ ունեցող, կենսաթոշակի անցած դասախոսներին հանձնեց ԵՊՀ-ի կողմից տրված շնորհակալագրերը և փոքրիկ նվերները:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկանը հայտնեց, որ ֆակուլտետի անվանափոխության հարցը դրական կարծիքով տեղափոխվել է գիտխորհուրդ, որտեղ էլ պետք է քննարկել անվան նոր տարբերակները և հաստատել դրանցից մեկը, որն էլ կներկայացվի համալսարանի գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ելույթ ունեցողները նշեցին, որ անհրաժեշտ է ավելի ժամանակակից, առավել գրավիչ, նոր ծրագրերին համապատասխանող անվանում: Առաջարկեցին հետևյալ տարբերակները՝ 1. *Եվրոպական լեզուներ և մշակույթ*, 2. *Եվրոպական լեզուներ, գրականություն և մշակույթ*, 3. *Եվրոպական լեզուներ և գրականություն*: Յուր Գաբրիելյանը առաջարկեց քվեքրկության դնել նաև 4-րդ տարբերակը, այն է՝ ֆակուլտետի անվանումը նույնը թողելը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Նշված 4 տարբերակների քվեարկության արդյունքում 11 հոգի կողմ քվեարկեցին առաջին տարբերակին, 6 հոգի՝ երկրորդ և երրորդ տարբերակներին, 3 հոգի՝ 4-րդ տարբերակին և 4 հոգի ձեռնպահ մնացին քվեարկելուց: Մեծամասնության քվեարկության արդյունքում ընդունվեց ֆակուլտետի նոր անվան առաջին տարբերակը՝ *Եվրոպական լեզուների և մշակույթի ֆակուլտետ*:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Վերահաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ս. Վարդանյանի՝ 1990թ.-ին Մոսկվայի պետական համալսարանում հաստատված դոկտորական ատենախոսության թեման՝ «Взаимодействие речевого и певческого голоса в артикуляции английской речи /на материале английского, русского и армянского языков/» Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ /անգլերեն/» մասնագիտությամբ:
- Հաստատել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Սելեդե Շամս Գոլթոխի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Ժամանակային հարաբերությունները ժամանակակից ֆրանսերենի բայական համակարգում» Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ /ֆրանսերեն/» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ, դոց. Ա. Մուրադյանին:
- Տպագրության երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա. Հաջի-Հակոբյանի Ա. Հաջի-Հակոբյանի *Գենդերային հիմնահիմնդիրները միջմշակութային ընկալումների համատեքստում /անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ/* մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսներ Արշալույս Պետրոսյանի և Բելլա
- Սարուխանյանի *Readings on Pedagogy* ուսումնական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյանի և նույն ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա. Մաթևոսյանի *Տեքստ, փոխաբերականություն, մեկնաբանություն* մենագրությունը:
- Երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս Գ. Գրիգորյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Հավանություն տալ բակալավրիատի նոր կրթական ծրագրի մշակման նախագծին և արտոնել ամբիոններին ներկայացնելու ծրագրի հայտերը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

16 հոկտեմբերի 2017 թ.